ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«24» մայիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի շրջանավարտներ

Լավագույն բարեմաղթանքներով շնորհավորում եմ ձեզ «Վերջին զանգի» առթիվ:

Խորհրդանշական այս օրը ձեր կյանքում կմնա որպես նոր կյանքի սկիզբ, որտեղ ձեզ համար բացվելու են նոր հորիզոններ, մուտք եք գործելու առավել պատասխանատու մի շրջան, երբ որոշումների կայացումը կանխորոշելու է ձեր հասուն կյանքի հետագա ուղին:

Այստեղ կարևորվում են երազանքներն ու նպատակները կյանքի կոչելու գաղափարները, որոնց իրականացման համար ձեզ հաջողություններ եմ մաղթում:

Հավատացած եմ, որ Հայաստանի ապագան հուսալի ձեռքերում է, ի դեմս ձեզ՝ մենք ունենք քաղաքացիական բարձր գիտակցությամբ, վեհ գաղափարներով օժտված արժանապատիվ սերունդ:

Համոզված եմ, որ դուք ձեր նպատակասլացությամբ ու ողջ ներուժով կզորակցեք հայրենիքի հզորացմանն ու զարգացմանը:

Շնորհավորանքի և երախտիքի խոսք եմ հղում նաև ուսուցիչներին և շրջանավարտների ծնողներին, ովքեր իրենց ներդրումն ու ջանքերն ունեն ազնիվ, գիտակ հայորդու և արժանապատիվ քաղաքացու կայացման գործում:

Սիրելի շրջանավարտներ, մաղթում եմ, որ ձեր կյանքի այս նոր փուլն էլ ավելի հաջողված լինի, որ տարիների ընթացքում կուտակած գիտելիքների և հմտությունների պաշարը լինի ձեր, ձեր ընտանիքների բարեկեցության և մեր հայրենիքի զարգացման գրավականը: Բարի երթ ձեզ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ